

ԱՄԵՆԱԱՄԵՇ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹՅԱՆ

Զուրը բնության ամենամեծ պարզեն է մարդուն և առնասարակ ողջ օրգանական աշխարհին: Ոչ շատ նեռավոր անցյալում գիտնականերն իրենց լաբորատորիաներում, իսկ ճանապարհորդները նեռավոր երկրներում որոնում էին հավիտնական երիտասարդություն ապահովող կենսատու նեղաւոց: Նրանց մուրով իսկ չեք անցնում, որ դա մաքուր ջուրն է: Ասենք հիմա էլ, եթե խոսք է լինում ամենաքաղաքացիներ օգտակար հանածոյի մասին, առաջնությունը տալիս են ուրուն, պլատինին և այլն, միևնույն մոռանում են ջրի՝ այդ ամենաանհրաժշտ օգտակար հանածոյի գոյությունը: Ջրի մասին կարելի է շատ նետաքրքրական պատմություններ անել, բայց այսօր մենք կիսուներ միայն այն պրոբլեմների մասին, որոնք դարձել են մարդկության արդարացի մտահոգության առարկան: Դա ջրի պակասն է և նրա մաքրությունը:

Այդ առիթվ տպագրում ենք Ձ. Շահրապյանի և Ժան Վիդալի հոդվածները:

Ժան Վիդալը ֆրանսիական «Լիբերասիոն» թերթի թղթակից է, ևս ներկա է եղել այս տարի Փարիզում կայացած հիդրոլոգների կոնֆերանսին (այս կամակերպել էր ՅՈՒՆԵՍԿՕՆ), որի աշխատանքների մասին էլ համառոտակի պատմում է, իր հոդվածում:

ԶՈՒԼԱԼ ԶՐԵՐԻՆ ՎՏԱՆԳ Է ՍՊԱՌՆՈՒՄ

Բնության մեջ բազմաթիվ երևություններ փոխադարձաբար պայմանավորված են միմյանցով: Անտառը հավաքում ու իր մեջ է պահում անձրևներից և ծննդալից առաջացած ջրերը և շոգ ու չոր եղանակին այն տալիս իր շրջապատին: Անտառը ջրամքարի պես կարգավորում է ջրերի հոսքը տարվա ընթացքում: Այն վայրերում, ուր անխնա կերպով կտրվում են անտառները, ստեղծվում է վտանգ ջրի պաշարների համար: Այդ բանն արդեն զգացվում է Սվերդլովսկի և Պերմի մարզերում:

Բնության մեջ հավասարակշռված է նաև ջրերի ինքնամաքրման պրոցեսը: Զանազան գավերով և ծմբային միացություններով գերահեցած ջրերն այն վիճակում, ինչ բյուս են գետնի տակից, ոռոգելու և խմելու համար պիտանի չեն, բայց խառնվելով գետերի ջրերին, նորանում են և դառնում պիտանի:

Խոշոր քաղաքների և արդյունաբերական շրջանների մոտ գետերի ջրերը կեղտոտվում են օրգանական նյութերով ու մեռած օրգանիզմներով, ինչպես նաև կենցաղային կարիքների հա-

ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԾՈՎԵՐԻ
ԵՆԵՐԳԻԱՆ

Ինչորմացիոն հաղորդագրության կարճ տողեր. ՍՍՌՄ Մինիստրների սովետը որոշում ընդունեց «Ժողովրդական տնտեսության մեջ երկրի խորթային շերմությունն օգտագործելու աշխատանքների դարձացման մասին»: Այս «որոշումով սկիզբ դրվեց նոր տիպի էներգոսեռուների արդյունաբերական լայն կիրառման կազմակերպմանը»:

Ստորերկրյա ջրերի օվկիանոսներ...
Եռացող ջրերի ծովեր...

մար օգտագործված մնացորդային ջրերով: Այդ-
պիսով նպաստավոր միջավայր է ստեղծվում
բակտերիաների փարզացման համար: Գիտնա-
կանների հաշվումները ցուց են տվել, որ
sphaerotilus ուսուց բակտերիաները մեկ
քառակուսի կիլոմետր ջրավազանում օրական
յուրացնում են 30 տոննա օրգանական նյութ և
դրանից 20 տոննան վերածում հանքային աղե-
րի: Իրենք՝ բակտերիաները կեր են դառնում ին-
ֆուլորիաներին, վերջիններս իրենց հերթին
ավելի խոշոր կենդանիների, իսկ հանքային ա-
ղերով էլ սնվում են ջրաբույսերը: Այսպիսով,
ջրի ինքնամաքրման պրոցեսը կարգավորվում է
բնական ընթացքով: Բայց, եթե ջրավազանների
աղտոտումը մեծ չափերի ու մեծ հագեցվածու-
թան է հասնում, ապա խախտվում է բնության
հաստատած այդ օրինաչափությունը:

Որպեսպի ջրերի ինքնամաքրման պրոցեսը
չխափանվի, գիտնականները մշակել են համա-
պատասխան նորմաներ, թե ինչպիսի ջրառա-
տության գետում որքան աղը կարող է չխան-
գարել ջրերի ինքնամաքրման պրոցեսին: Հայտ-
նի է, օրինակ, որ գետերը թափվող կենցաղի և
արդյունաբերական կեղտաջրերի հագեցվածու-
թյունը պետք է փոքրանա առնվազն 80 ան-
գամ, որպեսպի չխախտվի գետի ինքնամաքրո-
ման պրոցեսը:

Բայց պահպանվում են արդյոք այդ նոր-
մանները:

Ներկայումս աշխարհի շատ գետեր այն աս-
տիճան կեղտոտված են ու թունավորված ար-
դյունաբերական ու կենցաղային աղբով, որ աղ-
բը տեղափոխելուց բացի, այլ նպատակի չեն
կարող ծառայել: Այդպիսին է, օրինակ, Պոտո-
մակ գետը, որի վրա գտնվում է Վաշինգտոնը:
Այդ գետն առաջին անգամ հետապոտել է կա-
պիտան Սմիթը 1608 թվականին: Այն ժամա-
նակ գետի ափերին տարածված էին փարթամ
անտառներ, ջուրը մաքուր էր և զուլալ, ծուլին
այնքան շատ էր գետում, որ Սմիթի վկայու-
թակե, ծկների գլուխները դուրս էին պրծնում

Մարդուն վաղուց արդեն գրավում է
այդ ջրամբարների էներգիան: Այն վիթ-
խարի է, ագելինչ անսպառ է ներկայու-
մըս ստորերկրյա ջերմության հետախուզ-
ված պաշարները համում են 100 մի-
լիոն տոննա պայմանական վառելա-
նություն:

Եթե տարեկան օգտագործենք 5 միլիոն
նորանարդ մետր ստորերկրյա հոացրած
ջուր, ապա մի ամրող հարյուրամյակի
ընթացքում մեզ կհաջողվի ողասարկել՝
այդ պաշարի ընդամենը 2 տոկոսը թայց
ստորերկրյա կաթսայատան այդ էկո-
րուստներն ել են վերականգնվում. Հէ
որ ջուրը ընության մեջ հավիտնական
հանսպարհորդ է:

ՍՍՌՄ ԳԱ Երկրաբանության ինստի-
տուտում կարելի է տեսնել մեր երկրի
անսպառ քարտեզը՝ նրա վրա անց են
կացված անտեսանելի տար ծովեր, ո-
րոնց ընությունը թաքցել է գետնի տակ:
Նրանցից մի քանիս ապշեցնում են ի-
րենց շափերով: Գրեթե Յ մեջ քառակուսի
կիլոմետր է րռնում, օրինակ, Արևմտա-
Սիբիրական ստորերկրյա ջրերի օվկիա-
նոսը: Եռացրած ջրերի ծովեր են հայտ-
նարերվել Թուրքմենիայում և Ուկրաինա-
յում, Կամչատկայում և Ղաղանստանում,
Կովկասում և Կուբանում... Խել ընդամենը.
Աստորերկրյա ձրի էներգիայի առնը-
վազըն 50 վիթխարի պահեստարան:

Այդ պահեստարանների շահագործումն
անհամեմատ ավելի արդյունավետ է, քան
նավթի և ածիխ օգտագործումը: Խնշան-
ցուց է տվել փորձը, գեղթերմիկ սար-
քավորման ստեղծման վրա կատարված
ծախսերը փոխհատուցվում են երեք-
շորս տարվա ընթացքում, իսկ տար շրի և
գոլորշու հորատանցը կաշխատի 20-30
և նույնիսկ 40 տարի: Եռացող ջրի 1000
խորանարդ մետր հզորությամբ մի աղ-
բյուրը օրական կարող է տալ այնքան
ջերմություն, որքան տալիս է մի վագոն
քարածումը:

Սկսվում է մեր ընդերքի ջերմային է-
ներգիայի յուրացումը: Շուտով Կամչատ-
կայի հարավում՝ Պառժետկա ավանում
շաբաթ կմտնի առաջին գեղթերմիկ էլեկ-
տրակայանը:

Իսկ որքան մեծ են այդ էներգիայի
յուրացման հեռանկարները:

ՕԳՏԱԿԱՐ ՓՐՓՈՒՐ

Խանհարկ տաճ պատումաններից դուրս էին պրծնում ու ծիփ քանձ բոլաներ: Հեշեներն անմիջապես այցող տաճ կողմն ուղղեցին խողովակային զները և դեպի ներքնահարկ տաճուղ մուտքի մոտ հարձարեցրին տարօրինակ մեծ փողալայնուկը:

— Տա՛ լ փրփուր:

Մոնշում է մոտուն, ու փրփուրի լայն շիրե ուղղված է զեսի ներքնահարկ: Անա փրփուրը ծածկում է տաշին հարկի պատկերը: Եթիու ռոպե անց փիւրուն սպիտակ բոլաները ուղարկ են զեսի երկրորդ, ապա երրորդ հարկ: Քառորդ ժամ անց խիթ փրփուրի ննջման տակ, տաճ պատումանները ուժով բացվում են, այնտեղից առատութեն դուրս են հոսում ձյունաման բոլաներն ու ներմանկով ծածկում շուրջը: Մի ժամի ռոպե ևս, ու նեղենք վերացնում է:

... Վերջին Սվերդովսկում սկսել են կիրառել երշենք մարելու նոր մերժ: Այն անհամեմատ ուժեղ է զոյուրյուն ունեցող հին փրփրատասկաններից: Մեկ խորանարդ մետք փրփուր առաջանող լուծույրից այնեղուցիները այժմ սասանում են ոչ թե 10, այլ 400 խորանարդ մետք փրփուր:

Այդպիսի փրփուրն անշերմանցիկ է, և նաև լցված շենքում երշեները լրիվ պատճով են:

Փրփուրի պղպջակները լի են բրվածնով: Այդ բույլ է տալիս նշշեներին ծխով լի այրվող տաճ մեջ լինելու առանց հատուկ բրվածնային սարքերի: Բավական է միայն զեմքը ծածկել մետաղյա բարակ ցանցով:

Հեշիմաբ այդ մերժոն առանձնապես գնահատելի է, եթե նեղենք սկսվում է ներքնահարկից:

Փորձերը ցոյց են տվել, որ նույնիսկ 700 առտիեն չերմուրյան զեսիում երբ-

ջրից: Խսկ այժմ, ինչպես գրում են ամերիկյան ամսագրերը, Պոտոմակը Վաշինգտոնի մոտ նման է կեղտաջոի փոսի, որի հատակին տեղատեղ աղբի շերտը 3 մետրի է հասնում, և «գետը մահամերծ է»: Այստեղ նույնիսկ չի կարելի լողալ ջրային դահուկներով, որովհետուն ջրի ցայտերն ընկնելով սպորտսմենի բերանը կարող են թունավորել նրան:

ԱՄՆ-ում բացարձակ կեղտոտ գետերի ընդհանուր երկարությունը հասնում է 2000 կիլոմետրի: Առանձնապես կեղտոտ են լճերը՝ հատկապես Միջիգանը, որի Ուերիտան-Բեյ ծոցն են թափում Նյու-Յորքի և Նյու-Օերսիի կեղտաջրերը:

Հատ ավելի անմիջիքար վիճակ է տիրում Արևմտյան Եվրոպայում: Այստեղ չկա գրեթե մի գետ, որի ջուրը պիտօնի լինի խմելու համար: Բանն այստեղ է հասել, որ Ուեյնը, օրինակ, կեղտոտումից փրկելու համար ստեղծվել է հատուկ միջազգային կոմիտե: Խսկ արևադարձին շատ երկրներում գետերը ոչ միայն դադարել են օգտակար նպատակի ծառայելուց, այլև դարձել են զանազան հիվանդությունների տարածման աղբյուր:

Լավ չէ վիճակը նաև մեկ մոտ՝ Հայաստանում: Ով վերջին տարիներին եղել է Զանգեզուրում, տեսած կլինի, թե ինչպես է կերպարանափոխվել փրփրադեկ կապտաջուր Որոտանը:

Դաստակերտի պղնձա-մոլիբդենային կոմբինատը պղտորում է Այրի գետը, խսկ Քաջարանի ու Ղափանի կոմբինատները՝ Ողջին, և քիմիական միացություններով թունավորված այդ գետերի ջրերը միանում են Որոտանին ու Վրիում վերջինի ջրերը ոռոգման նպատակով օգտագործելու հնարավորությունից:

Գետերի ջրերը կեղտոտվում են ոչ միայն արդյունաբերական ձեռնարկությունների և քաղաքային բնակչության կողմից: Գետերով նավարկող տրանսպորտը ջուրն է թափում մազուր և հանքային յուղեր, որոնք փառապատում են ջուրը և արգելակում թթվածնի մուտքը, ստեղծելով անբարենպատ պայմաններ ծկների համար:

Գետերով փոխադրվող անտառանլութի թերթը, տաշեղները, փտած և սուլված գերանները ժամանակի ընթացքում հավաքվում են գետափերին, ներծծվում նավթանլութերով ու նեխուվում, հարյուրավոր կիլոմետրերի վրա ստեղծելով մի տիած պատկեր: Այդ գետերում ծկները ոչնչանում են: Ալդախին է, օրինակ, Կաման՝ սկսած Կրամսնոյարսկից մինչև Սպիտակ գետի գետաբերանը:

Բայց ինչպես անել, որ արդյունաբերության հախուսն զարգացմանը վուգընթաց մարուր մնա նաև ջուրը: Մի՞թե ելք չկա: Կա՛, ինարկե՞: Մեր երկրում, օրինակ, ներկայումս յուրաքանչյուր նոր կառուցվող արդյունաբերական ձեռնարկությունում նախատեսվում է տեղադրել օգտագործված ջրի մաքրման և վնասավերծման սարքավորում: Մինխատրների սովորի հատուկ որոշմամբ ջրերի մաքրման հարմարանքներ են ստեղծվում նաև նախկինում կառուցված շատ ձեռնարկություններում:

Եթեկտավոր միջոցներից մեկն էլ այն է, որ օգտագործված ջուրը մաքրվում և նորից շրջանառության մեջ դրվում արտադրական պրոցեսում: Արդյունաբերության բազմաթիվ ճյուղերում այդ մեռվ կարելի է շրջանառության մեջ դնել օգտագործված ջրի 90%-ը, իսկ աննշան մնացորդն էլ մաքրել և հետո միայն թողնել ջրավազանները: Ամերիկյան մի մետալուրգիական գործարանում այդ եղանակով հաջողվել է մեկ օրում պահանջվող 292 տոննա ջրի փոխարեն ծախսել 9 տոննա: Այժմ ալդախի փորձեր կատարվում են նաև մեզ մոտ:

Չիկագոյի սպանդանոցի մասին ասում են թե «Նրանում ամեն բան օգտագործվում է և ծառայեցվում ինչ-որ նպատակի, բացի անասունների նախամահու բառաչից»: Պետք է ներքաղել, որ ժամանակի ընթացքում արդյունաբերական բոլոր ձեռնարկությունները կաշխատեն առանց թափթափվեների, այսինքն հումքը լրիվ կօգտագործվի, և ջրերը ազատվելով արդյունաբերական աղբ ու կեղտից, կմնան մարուր ու վուլալ:

Հեղները կարող են մանել ներքենանարկ և ուսումնակիրել այդ փրփուրի կատարած գործողությունները: Ամենաուժեղ նրբենը նա կառող է մարել 12 րոպեի ընթացքում:

Ի դեպ, այդ փրփուրը նետարեցում է ոչ միայն երշեղներին: Մշակվել է պեղացող փրփուրի զեղատումը: Այն օգտագործվել է Կրասնոյարսկի նիդրուկելեկուրակայանի բետոններում ուսպես շերմացնող: Խոկ երբ կինոստուդիաներից մեկին պետք եղավ ամառը ձմեռային տեսարանի նկարանառումներ անել, պրեգացած փրփուրը նիանալիորեն փոխարինեց ձյանը...

ԶՈՐ ԱՆՁԲԵԼ

Մեր կողմերում անձրեի տակ ընկենն այնքան էլ հաճելի չէ, մանավանդ, եթե ցուրտ է և թեթև եք հագնված: Բայց երկրագնդի վրա կան վայրեր, որ անձրեի տակ էլ կմնար միանգամայն չոր, քանի որ անձրեն ինքը այսպես չոր է:

Այս միանգամայն անհավատալի թվացող երկույթը նկատվում է անապատային շատ շրջաններում, այդ թվում և մեր միջինասիրական անապատներում: Բանն այն է, որ այդ վայրերում կլիման խիստ ցամաքային է, իսկ օդը՝ արտակարգ չոր: Ամպերն այստեղ շափազանց հազվագետ երկույթ են, առավել հազվադեպ՝ անձրենները: Բայց, եթե նույնիսկ անձրեն լինում է, ապա նրա կաթիլները հաճախ դուրս շիանում են օդում՝ շնասնելով գետնին: Նման գեղքերում դուք տևանում եք, թե ինչպես անձրեն է գալիս, կանգնում եք նրա տակ, բայց ամեննին շեք զգում այն դա հենց չոր անձրեն է:

ԿԲԱՎԱԿԱՆԱՑՆԻ՝ ԱՐԴՅՈՒՆ ԶՈՒՐԸ ՄԵԶ

ԵՐԿՐՈՎՆԻ: ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ

001111 Կենսաբնական վիճակագրական վարչությունը հետաքրքիր տվյալներ է տալիս երկրագնդի բնակչության թիվ փոփոխության մասին գրեթե 1000 տարվա ընթացքում (1900—1963): 1000 թվականին ամբողջ աշխատանու ապրել է 275 միլիոն մարդ, իսկ 1963 թվականի սկզբում՝ 3 միլիոն 150 միլիոն, այսինքն բնակչության թիվն անել է ավելի բան 11 անգամ: 1962 թ. երկրագնդի վրա ծրագիրը է 119 միլիոն և մահացել 59,5 միլիոն մարդ, մեկ տարում անը կազմել է 59,5 միլիոն մարդ:

Հայոց աշխարհամասերի բնակչության անը բնօրշվամ է հետեւյալ բիեռով (միլիոններով):

Տարրի թիվը	Ամբողջ աշխարհու- նում	Երկրություն	Աֆրիկա	Այսինքն	Ազգայի- նական պետու- թյուններ	Նիւթե
1000	275	42	50	13	170*	—
1961	3061	598	261	121	1764	17

Բուռն կերպով անել է եվրոպայի (ավելի բան 14անգամ) և Ասիայի (ավելի բան 10 անգամ) բնակչությունը:

Զագագանց հետաքրքիր են նաև բազարային բնակչության թիվ մասին եղած տվյալները: Ամբողջ աշխատանու բնակչության մոտավորապես մեկ երրորդն է (32%): Միայն ապրում բարձնենում: Եվրոպայում բարձաբային բնակչությունը կազմում է 50 %, Հյուսիսային և Կենտրոնական Ամերիկայում 64 %, Հարավային Ամերիկայում 44 %, Ավստրալիայում և Օվկիանայում 72 %: Ասիայում և Աֆրիկայում գերակշռություն է զյուզական բնակչությունը, իսկ բարձնենում ապրում է բնակչության գրեթե 18% (Աֆրիկա) և 21%-ը (Ասիա):

* Ներառյալ Ավստրալիայի և Օվկիանիայի տվյալները:

Երբ հյուրանոցի տերը Հավերժական քաղաքում ստիպված է լինում չափավորել իր հաճախորդների ջուրը, լվացարանի կողքին կախվում է մի տախտակ հետևյալ քաղաքավարի մակագրությամբ. «Ներեցեք մեզ, բայց Հոռոմնավելի արագ է աճում, քան նրա ջրամբարները»:

Ասենք, միայն Խտալիայի մայրաքաղաքը չէ, որ զգում է խմելու ջրի պակասը: Նույն պահանջը ավելի կամ պակաս սրությամբ զգացվում է բոլոր երկրներում: Այժմ գիտնականները լրջորեն մտածում են այն մասին, թե համաշխարհային մասշտաբով ինչպես կազմակերպեն պայթարը ջրի պակասի դեմ:

Մինչև այժմ հոժարաբար ընդունում էին, որ ջրի հետ կապված դժվարություններ գոյություն ունեն միայն անապատային շրջաններում և, որ գիտնականների ջանքերն ուղղված են բացառապես ջրամատակարարման սիստեմի մշակմանն ու ստեղծմանն այնտեղ, ուր երաշտն է իշխում: Մինչդեռ խմելու ջրի կարիքն ավելի դժվար է բավարարել սահմանափակ տարածություն ունեցող շրջաններում, ուր բնակչության խոտւթյունը մեծ է: Հաշվված է, որ մեծ քաղաքներում ամեն բնակչի վրա ծախսվում է օրական 350 լիտր ջուր:

Այս թիվը թերևս հսկայական թվա, բայց նրա մեջ են մտնում ինչպես կենցաղային, այնպես էլ համարագրային կարիքները: Եթե դրան ավելացնենք արդյունաբերության կարիքները, ապա պարզ կդառնա, թե ինչու ջուրն այսուհետև դառնում է թանկարժեք հումքը:

Գիտե՞ք արդյոք, որ մեկ կիլոգրամ շաքար արտադրելու համար անհրաժեշտ է 20 լիտր ջուր, իսկ մեկ կիլոգրամ արհեստական մանրաթելի համար՝ մեկ տոննա: Մեկ կիլոգրամ թուլք պատրաստելու համար պահանջվում է 200 լիտր ջուր, իսկ մեկ մետր մահուդի համար՝ տասն անգամ ավելի:

Մեր և ջրի միջև եղած «հարաբերությունների» մասին այս համառոտ հիշեցնումն արվեց ավելի հասկանալի դարձնելու համար այն խընդիրը, որ դրվագ էր ՅՈՒՆԵՍԿՕ-ում հավաք-

ված գիտնականների առաջ, այն է՝ Երկրային և Երկնային ջրերն այսպես ռացիոնալ տեղաբաշխել մեր մոլորակի վրա, որ մարդիկ, կօնդանիներն ու բույսերը չպահ նրա պակասը:

Դարեր շարունակ այն կարծիքն է եղել, թե ջրի ցիկլը անթերի կերպով կարգավորվել է ակունքից-ակունք. ջուրն անցել է առվակներով ու գետերով, գոլորշիանալով բարձրացել է վեր, այնուհետև թափվել անձրևի ու ձյան տեսքով և այսպես շարունակ: Ամեն ինչ պարզ էր, և մենք բավականանում էինք այն աներկրային ճշմարտությամբ, որ բնության մեջ ոչինչ չի կորչում:

Իսկ այժմ հայտնի է, որ ամեն օր Երկրային ջրի և օդի որոշակի մասն անհետանում և ընդմիշտ կորչում է տարածության մեջ: Այս «հոսակորուստ» ամբան զգալի է, որ ամերիկյան գիտնական Զ. Ջիլվերին պնդում է, թե իր գոյության մկանական շրջանից մինչև հիմա մեր մոլորակը շրջապատող օվկիանոսներից ու մթնոլորտից մի մոլեկուլ անգամ չի մնացել: Այստեղից հարց է ծագում. բավակա՞ն է արդյոք այն ջուրը, որ «արտադրում է» Երկիրը՝ այդ «հոսակորուստը» ծածկելու համար:

Սովետական պրոֆեսոր Վ. Բելուտովը գրտնում է, որ Երկրագնդի խորքից բարձրացող շիկացած բավալտից անջատվում է գրանիտ, որի ընթացքում արտադրվում է հոսկայական քանակությամբ ջուր:

Իսկ արդյո՞ք Երկրի ամբողջ քաղցրահամ ջուրն է պիտանի խմելու համար: Ո՞չ: Եթե այդպես լիներ, ապա այսօր անհանգստանալու ոչ մի պատճառ չկը լինի: Արդյունաբերության անընդհատ աճի հետևանքով տարեցտարի ոչ միայն ավելանում է ջրի սպառումը, այլև գետերն էլ լցվում օգտագործված և կեղտոտված ջուրը:

Կենտոտման դեմ պայքարելու հետ մեկտեղ հիդրոլոգները բոլոր միջոցներով որոնում են ջրամատակարարման նոր աղյութներ: Արհետական անձրևները, խորթային ջրերը, լողացող սառցաթեռները և նույնիսկ ծովային ջրի աղակրումը — այս բոլոր «բնական ռեվերվները» լրջորեն հետաքրքրում են գիտնականներին:

ԺԱՆ ՎԻԴԱԼ

ՏԵՏՐԱՑԻԿԱՆ ԱՆՏԻԲԻՈՏԻԿԸ ԵՎ
ԱՏԱՄԻ ԷՄԱԼԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԸ

Ատամանարուժական հետազոտությունների ազգային ինստիտուտի (ԱՄԴ) գիտաշխատողները «Զոռնել օֆ Ամերիկեն մեղիկալ ասոցիացիւն» մուտքայում գրել են, որ տեսրացիկլին անտիբիոտիկի կիրառումը, ըստ երևույթին, երեխաների կաթնատամների հմայի վնասվածքների առաջացման հիմնական պատճառն է:

Տետրացիկլինը կարող է ազդել նաև հիմնական ատամների վրա: Վնասվածքները մեծ մասամբ երևան են զախի դեղին կամ գորշ բծերի ձևով, բայց որոշ դեպքերում առաջ է զախի հմայի պարզացման հական թերություն: Հողվածի հեղինակները նշում են, որ այդ թերությունների երեվան գալու հաճախականությունը մեծանում է:

1963 թ. փետրվարից առաջ ընկած 6-ամսյա ժամանակամիջոցում հողվածի հեղինակները ուսումնասիրել են 2,5-ից մինչև 7 տարեկան 17 երեխաների, որոնց ատամների հմայը տետրացիկլինի օգտագործման հետևանքով գունավորվել էր կամ թերպարզացած էր:

Վնասվածքների պարզացումն ընդհանի է: ատամների այն տեղերում, որոնք ածել են տետրացիկլին օգտագործելու ժամանակ:

Հեղինակները նշում են, որ այդ նույն 6-ամսյա ժամանակամիջոցում նրանք միայն 7 երեխաների մոտ են դիտել ատամների վնասվածքներ, որոնք առաջացել են ժառանգական երեք հավվադեպ հիվանդությունների հետևանքով:

Պատահականորեն ընտրված 100 երեխաների ատամները ստուգելիս 45 տոկոսի մոտ հայտնաբերվել են տետրացիկլինի ազդեցան հետևանքներ, որոնք առանձին դեպքերում անհկատելի են անվեն աշքի համար: